<ՄՏՔԵՐ ՕՐԱՏԵՏՐԻՑ>

Ամբողջ մարդկությունը մի ընտանիք է: Ժողովուրդները էդ մեծ ընտանիքի անդամներն են: Գնում են մի նպատակի, և ամեն մեկն ունի իր դերը — երջանիկ դարձնելու ամենքին, և ամենքի երանջկությունը դարձնելու ամեն մեկի երջանկությունը: Ի՞նչ դեր ունի ամեն մի ժողովուրդ: Նեղ ազգայնականուլթյունը և այլն ինչքան են վնասում, կառավարություններն ինչքան են վնասում, աղանդները և այլն:

Մեծ պատերազմի հաղթությունը եղավ ռուսական բոլշևիզմը: Նա եղավ էն ցնցումը, որ նոր հոգեբանություն ու նոր կյանք է առաջ բերելու: Նոր ճամփի վրա է գցում: Հնի խորտակումն է, որ արդեն զզվեցրել էր ամենքին, իմպերիալիզմի դեմ բողոքել են բոլորը — ցրիվ և դժգոհ են եղել բոլորը — սա միանգամից էդ զայրույթը հավաքեց և զարկեց: Եվ ստիպում է նոր մտածել ու նոր ճամփա բռնել...

...Մենք մեջտեղն ենք—հոգևոր Արևելքի և գործնական Արևմուտքի: Արևելքը — մարդը հասցրել է աստծուն, տիեզերքին: Աթմանին[1] խառնել: Իսկ Արևմուտքը—ամենաշատը մինչև դասակարգը: Եվ ունեցել է էնպես թռիչքներ—ինչպես ֆրանսիական, անգլիական մեծ խարտիան — մարդու իրավունքը...

Երկուսի սինթեզը:

Իրենց մեծ էնցիկլոպեդիստներից հետո ֆրանսիական հեղափոխությունը — ընդհանուր եղբայրություն, հավասարություն և ազատություն:

Անգլիական մեծ խարտիան — մարդու իրավունքը:

Ռուսը — նոր կոմունիզմը — իսկ Արևելքը — վաղուց ի վեր: